socrative

Name ____________
Date ____________

# Գիտելիքների ստուգում մեդիագրագիտությունից

Score ____________

**1.** Դուք առցանց տեսանյութ եք գտնում, որը պարունակում է ռասիստական և անարգական նյութ: Ի՞նչ կանեիք:

(A) Ոչինչ, այն տեղադրված է առցանց և ուրեմն ոչինչ հնարավոր չէ անել այդ կապակցությամբ

(B) Նշում եք այդ տեսանյութը՝ օգտվելով տվյալ կայքի՝ հաղորդումներ ներկայացնելու ընթացակարգից

(C) Զանգահարում եք ոստիկանություն և ներկայացնում բողոք

(D) Ներբեռնում եք տեսանյութը և ուղարկում այն ձեր ընկերներին, որպեսզի իրենց տեղյակ լինեն, թե որքան վատ նյութ է դա

**2.** Ճի՞շտ է թե սխալ: Խոսքի ազատությունը նշանակում է, որ դուք կարող եք այլ անձանց հասցեին վիրավորանքներ գրել Համացանցում:

(T) True

(F) False

**3.** Ստորև բերվածներից ո՞րը ձեզ կհուշի, որ կայքն անվտանգ ու ապահով է օգտագործման համար:

(A) https

(B) Կայքի ներքևի կողպեքի նշանը

(C) Հասցեի վանդակում կանաչ ֆոնը

(D) .com կամ .org վերջավորությունը ցանցային հասցեում

**4.** Հետևյալից ո՞րը ձեր հեռախոսի մեջ պահպանվելու պարագայում ձեզ կդներ խարդախության հավանական ռիսկի տակ:

(A) Տան հասցեն

(B) Ծննդյան ամսաթիվը

(C) Բանկային քարտի տվյալները

(D) Սոցիալական ցանցի գաղտնաբառերը

**5.** Ճի՞շտ է ստեղծել սոցիալական ցանցի անձնական էջ՝ առանց օգտագործելու ձեր իրական անունը, երբ դա պահանջվում է այդ կայքի պայմաններում ու պարտադիր նորմերում:

- (T) True
- (F) False

**6.** Ստորև նշվածներից ո՞րը կօգնի ձեզ պաշտպանել առցանց հեղինակությունը:

- (A) Ընկերություն անել միայն այն մարդկանց հետ, ում ճանաչում և վստահում եք
- (B) Կանոնավոր կերպով վերանայել գաղտնիության կարգավորումները սոցիալական ցանցերի անձնական էջերում
- (C) Ջնջել սոցիալական ցանցերի ձեր բոլոր նկարագրերը
- (D) Օգտվել միայն սոցիալական մասնագիտական ցանցերից, ինչպիսին է, օրինակ, LinkedIn-ը

**7.** Ուժեղ գաղտնաբառը կարող է պաշտպանել ձեր առցանց հեղինակությունը. հետևյալ նախադասություններից որն է նկարագրում լավագույն գաղտնաբառը:

- (A) Հեշտ հիշվող և կարճ մի բան
- (B) Երկար գաղտնաբառ, որը պարունակում է տառեր, թվեր և խորհրդանշաններ (անհրաժեշտ կլինի գրի առնել այն, քանի որ հիշելը բարդ կլինի)
- (C) Ձեր անունը հետևից առաջ, վերջում էլ ձեր ծննդյան ամսաթիվը
- (D) Բառ, որը չի գտնվի բառարանում, առնվազն ութ նիշից, որը կպարունակի տառեր, թվեր և խորրդանշաններ, որ կկարողանաք հիշել:

**8.** Ինչ-որ մեկը ձեր քեֆի լուսանկարն է վերբեռնել հանրային հարթակ, որտեղ դուք պառկած եք հատակին և ձեր կողքին օղու դատարկ շիշ է: 50 հոգի մեկնաբանություններ են թողել լուսանկարի տակ: Ի՞նչ կանեք:

- (A) Ոչինչ, դուք չեք խմում, ձեր ընկերներն են նկարը սարքել
- (B) Զանգում եք այն անձին, ով տեղադրել է լուսանկարը և խնդրում այն հեռացնել
- (C) Զանգում եք կայքի ադմինիստրատորին և խնդրում, որ ձեր լուսանկարը հեռացնեն, քանի որ այն խախտում է կայքի պայմաններն ու նորմերը
- (D) Դուք հասցնում եք պատասխան հարված ունեք. համացանցում տեղադրում եք ձեր ընկերոջ «զվարճալի» լուսանկարները և այնպես անում, որ բոլորն իմանան դրանց մասին

**9.** Արդյոք օրինակա՞ն է տեղադրել մի ամբողջական հոդված, եթե հիշատակում եք հեղինակին և ներառում հղում բնագրին՝ առանց նրա թույլտվության:

**10.** Դուք ընկերների խմբով հրավիրված եք երեկույթի, սակայն անհանգիստ եք, թե ինչ կարող է հայտվել առցանց այդ երկույթից հետո. Ի՞նչ պետք է անեք:

(A) Ապահովեք անթերի վարքագիծ շաբաթ կիրակիի ընթացքում

(B) Մի գնացեք, շատ ռիսկային է

(C) Քննարկում անցկացրեք ձեր ընկերների հետ շաբաթ-կիրակիից առաջ և բացատրեք ձեր մտահոգությունները՝ բացատրելով նրանց, թե ինչու եք զգուշավոր ձեր առցանց հեղինակության հարցում

(D) Սպասեք որ շաբաթ-կիրակին անցնի, հետո տեսեք, թե ինչ է տեղի ունենում